ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀՈՒՇԱԳԻՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԵՎ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՊԵՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՄԻՋԵՎ

Հաշվի առնելով, որ Կողմերն ընդունում են փոխադարձ համագործակցությունը և պետություն, կրթություն, տնտեսություն եռամիասնության ապահովման ձգտումը.

Կարևորելով պրակտիկ հետազոտությունների համատեղ իրականացումը և արդյունքների ներդրումը ի շահ Հայաստանի Հանրապետության.

Ընդունելով Կողմերի պատրաստակամությունը պրակտիկ համատեղ հետազոտությունների իրականացման, ուսանողների պրակտիկաների կազմակերպման, համատեղ գիտական միջոցառումների կազմակերպման համատեքստում.

Հիմք ընդունելով սույն հուշագիրը և փոխադարձ պայմանավորվածությունները.

Կողմերը համաձայնեցին հետևյալի շուրջ՝

1. Համագործակցության նպատակը

Սույն հուշագրով Կողմերը նախատեսում են Հայաստանի Հանրապետության օրենսդրության շրջանակներում համագործակցել հուշագրի 2-րդ մասով նախատեսված ուղղություններով՝ իրենց հնարավորությունների, միջոցների և փորձի կիրառմամբ:

2. Համագործակցության ուղղությունները

2.1 Սույն հուշագրով համագործակցության շրջանակներում Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզպետարանը (այսուհետ՝ Մարզպետարան) «Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ» հիմնադրամին (այսուհետ՝ Ինստիտուտ) ներկայացնում է մարզային խնդիր կապված մարզային դպրոցներում և մարզադպրոցներում դասավանդման, ֆիզիկական կուլտուրայի արդյունավետության բարձրացման, հանրային առողջության քարոզչության հետ, իսկ Ինստիտուտն էլ պատրաստակամ է ընդունելու այդ խնդիրները և գիտական հենքի հիման վրա ձևավորել մագիստրոսական թեզերի, ատենախոսությունների և այլ գիտագործնական աշխատանքների թեմաներ մասնագիտացված ամբիոններում:

2.2 Ինստիտուտը պատրաստակամ է պրակտիկ թեմաները առաջարկել ուսանողներին՝ ամբիոններում և տեղերում հետազոտություններ իրականացնելու, իսկ Մարզպետարանը պատրաստակամ է գործուն և առարկայական աջակցություն ցուցաբերել հետազոտություն իրականացնող Ինստիտուտի սովորողներին:

2.3 Սույն հուշագրով Կողմերը համագործակցում են նաև.

2.3.1 համատեղ խորհուրդների ձևավորման և Կողմերի լիազորված աշխատակիցների միջոցով մարզպետարանում պաշտպանությունների կազմակերպման և հետազոտողներին տվյալ ոլորտում աշխատանքի անցնելուն աջակցման հարցերի շուրջ,

2.3.2 նորարարական, դրամաշնորհային ծրագրերի համատեղ իրականացման շուրջ,

2.3.3 գիտական համաժողովների, սեմինարների, խորհրդակցությունների կազմակերպման միջոցով,

2.3.4 սույն հուշագրից բխող համապատասխան նյութերի հրատարակման,

2.3.5 սույն հուշագրի գործողության շրջանակներում Կողմերի գործառույթների կատարման համար, ըստ աշխատանքային անհրաժեշտության, մարզաբազաների, տարածքների, գույքի օգտագործման հնարավորության և իրավասության սահմաններում,

2.3.6 երկկողմանի հետաքրքրություն ներկայացնող ուսումնակրթական բնույթի ծրագրերի, այդ թվում՝ համապատասխան ոլորտներում հետազոտությունների իրականացման,

2.3.7 համատեղ իրականացվող աշխատանքների արդյունքների, դրանց խոչընդոտող հանգամանքների մասին տեղեկատվություն հայցելու և ստանալու,

2.3.8 երկկողմանի հետաքրքրություն ներկայացնող՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության շրջանակներում Կողմերի գործունեությանը և մասնագիտացմանն առնչվող գիտագործնական, ինչպես նաև մասնագիտական և կազմակերպական բնույթի այլ ուղղություններով:

3. Համագործակցության սկզբունքները

Կողմերը սույն հուշագրի սահմաններում իրենց գործառույթներն իրականացնում են օրինականության, փոխօգնության, համագործակցության սկզբունքներով:

4. Եզրափակիչ դրութեր

4.1 Սույն Հուշագիրը կնքվում է երկու օրինակից հայերեն լեզվով, որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

4.2 Սույն հուշագրի լրացումներն ու փոփոխությունները համարվում են հուշագրի անբաժանելի մասը:

4.3 Սույն հուշագիրը չի առաջացնում ֆինանսական պարտավորություններ Կողմերի համար:

4.4 Յուրաքանչյուր կողմ կարող է միակողմանիորեն խզել հուշագիրը՝ այդ մասին մեկ ամիս առաջ տեղյակ պահելով մյուս կողմին:

4.5 Սույն հուշագիրը կնքվել է Եղեգնաձոր քաղաքում, 2020թ. սեպտեմբերի 19-ին:

4.6 Սույն հուշագիրը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և գործում անժամկետ:

Կողմերի վավերապայմանները և ստորագրությունները

Մարզպետարան
Հայաստանի Հանրապետության
Վայոց Ձորի մարզպետարան
ք. Եղեգնաձոր, Շահումյան 5
Մարզպետ՝ Արարատ Գրիգորյան

ստորագրություն, Կ.Տ.

Ինստիտուտ
Հայաստանի Ֆիզիկական կուլտուրայի և
սպորտի պետական ինստիտուտ
ք. Երևան, Ալեք Մանուկյան 11
Ռեկտորի ժ/պ՝ Դավիթ Խիթարյան

ստորագրություն, Կ.Տ.